# Գիտական ներուժի պահպանումը օրվա հրամայական



**Ապրիլի 29-30-ին տեղի ունեցավ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը՝ նվիրված 2001 թ. գործունեության հիմնական արդյունքներին:**
**Ներկաները մեկ րոպե լռությամբ հոտընկայս հարգեցին ակադեմիայի՝ հաշվետու ժամանակահատվածում կյանքից հեռացած անդամներ Հրանտ Թամրազյանի, Լևոն Մկրտչյանի, Հովհաննես Բակլավաջյանի և Լեոնիդ Հակոբյանի հիշատակը:**
**Ներածական խոսքով հանդես եկավ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը:**

- Ամփոփելով ակադեմիայի հաշվետու տարվա գործունեության արդյունքները,- ասաց նա,- պետք է նշել, որ չնայած շարունակվող ծանր նյութական պայմաններին, համակարգը գիտական հետազոտությունների ասպարեզում հասել է դրական որոշ տեղաշարժերի: Մեր գիտնականների ջանքերը նպատակաուղղվել են գիտության զարգացման այն հիմնական ուղղությունների հստակ ուրվագծմանը, որոնք բխում են երկրի տնտեսական զարգացման, ազգային անվտանգության շահերից: Գիտնականների առջև ծառացած խնդիրը եղել է գիտական ներուժի և առկա ձեռքբերումների պահպանումը:

Հաշվետու տարում զարգացել է կապը տարբեր երկրների և առաջին հերթին Ռուսաստանի Դաշնության գիտական օջախների հետ, ինչն օժանդակում է մեր գիտության՝ ձեռք բերված մակարդակի պահպանմանը, նրա միջազգային ճանաչմանը: Զգալի են կնքված պայմանագրերի, դրամաշնորհների, հովանավորների, հիմնադրամների ներդրումները գիտության ֆինանսավորման ասպարեզում: Շարունակվել են առաջնահերթ համարվել երկրի պաշտպանության խնդիրները, բարձր տեխնոլոգիաների, էներգիայի և վառելիքի նոր աղբյուրների, հանքահումքային պաշարների հետազոտման աշխատանքները, նոր աշխատատեղերի ստեղծման, շրջակա միջավայրի պահպանման, կենսատեխնոլոգիայի, ժառանգական հիվանդությունների, հայագիտության և հասարակական մյուս գիտությունների ուղղությամբ տարվող հետազոտությունները:

Ներածական խոսքում հատուկ ընդգծվեց Սևանի պրոբլեմի հետ կապված աշխատանքների կարևորությունը, որպիսի պարտավորություն օրենքով է դրված ակադեմիայի վրա:

Հաշվի առնելով այն պարզ ճշմարտությունը, որ առանց գիտության չի կարող լինել պետություն և չի կարող զարգանալ հասարակությունը, պրն Սարգսյանը ցավով ընդգծեց, որ այսօր մեր երկրում գիտության հեղինակությունը չի գտնվում արժանավայել բարձրության վրա, չնայած պատկառելի է մեր գիտական ներուժը և պատիվ կարող է բերել ոչ քիչ թվով զարգացած երկրների: Ստեղծված իրադրության հետևանքով շատ գիտնականներ լքել են հայրենիքը՝ օտարության մեջ փնտրելով իրենց տաղանդի դրսևորման հնարավորությունները: Ընդ որում, մեկնածների թվում քիչ չեն այնպիսիք , որոնց ներդրումն արդեն ակնհայտ է համապատասխան երկրների գիտության զարգացման գործընթացում:

Ստեղծված պայմաններում այլ ելք չկա, քան որդեգրել գիտա-տեխնիկական քաղաքականության այնպիսի սկզբունքներ, որոնք նպաստեն մեր գիտական ներուժի պահպանմանը, ստեղծել համապատասխան օրենսդրական և իրավական դաշտ և կյանքի կոչել ընձեռված հնարավորությունները:

Անդրադառնալով ՀՀ Ազգային ժողովի կողմից 2000 թ. դեկտեմբերի 5-ին ընդունված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքով ՀՀ ԳԱԱ-ին վերապահված դերակատարումներին, ակադեմիայի պրեզիդենտը նշեց, որ ցավոք, դրանք լիարժեք չեն իրականացվում, թեև օրենքի ընդունումից անցել է ավելի քան մեկ տարի: Չևավորված չեն ենթաօրենսդրական այնպիսի ակտեր ու որոշումներ, որոնցով գիտական համակարգում հնարավոր լինի դրական լուրջ տեղաշարժեր ակնկալել:

Կենսական հարց է ակադեմիայում, բուհերում և ճյուղային նախարարությունների համակարգերում կուտակված գիտատեխնիկական ներուժի նպատակային և արդյունավետ օգտագործման կազմակերպումը: Այս իմաստով նպատակահարմար է իրականացնել այնպիսի կառուցվածքային փոփոխություններ, որոնք առաջին հերթին նպաստեն կամ կիրառական բնույթի ինստիտուտների միավորմանը համապատասխան արտադրական ձեռնարկությունների հետ՝ ստեղծելով ֆիրմաներ, կոնցեռններ, կամ էլ պայմանագրային հիմունքներով դրանց համագործակցությանը:

Ներածական խոսքում անդրադարձ կատարվեց ծրագրային-նպատակային ֆինանսավորման, համակարգում լուրջ բարեփոխումների անհրաժեշտության, կիրառության իմաստով հետաքրքրություն ներկայացնող հետազոտությունների լիարժեք գովազդի, մենեջմենթի կազմակերպման, գիտական ներուժի թարմացման ու երիտասարդացման հարցերին: Անիմաստ համարվեց ակադեմիայի նախագահությանը զուգահեռ ունենալ ևս մի կառավարող մարմին՝ լինի դա նախարարություն թե կոմիտե, նշելով, որ պետական մարմինները կոչված են հովանավորելու, այլ ոչ թե վարչական մեթոդներով կառավարելու գիտությունը:

Վերջում ակադեմիայի պրեզիդենտը տեղեկացրեց, որ օգտվելով «Գիտական և գիտահետազոտական գործունեության մասին» ՀՀ օրենքով վերապահված իրավունքից, ակադեմիան առաջարկությունների փաթեթ է պատրաստել, որը կներկայացվի կառավարության քննարկմանը: Նաև համակարգի գիտնականների անունից երախտիքի խոսք ասաց գիտական աշխատանքների հովանավորների, մասնավորապես «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի և Հայ օգնության ֆոնդի մասին, համոզմունք հայտնելով, որ ակադեմիայի համակարգի աշխատողները, ակնկալելով համապատասխան աջակցություն և օգնություն, ամեն ջանք ու եռանդ կներդնեն՝ գիտական օջախի վաղեմի փառքը վերահաստատելու համար:

Տարեկան ընդհանուր ժողովի մասնակիցներին հայրապետական բարեմաղթանքներով ողջունեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը, նշելով, որ Աստծուց մարդուն շնորհված բանականության պսակն է գիտությունը: Անժխտելի է հայ գիտնականների՝ գիտության տարբեր ասպարեզներում բերած ծանրակշիռ ներդրումը: Ներկաներից յուրաքանչյուրն առավել խորամուխ է այդ նվաճումների էությանը, հասու դրանց կարևորությանը, առավել ծանոթ բազմամյա այն ավանդներին, որոնք ամրագրված են գիտության այս սուրբ կաճառում:

- Այսօր, երբ դուք հավաքվել եք ամփոփելու անցյալ տարվա արդյունքները և նախանշելու առաջիկա անելիքները,- շարունակեց Նորին սրբությունը,- առ Աստված մեր աղոթքն ու մաղթանքն է, որ Տերը զորավիգ լինի ձեզ բոլորիդ՝ ձեր առաքելության ճանապարհին: Շնորհ և սեր եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեան, ամեն:

ՀՀ ԳԱԱ 2001 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ ակադեմիայի փոխպրեզիդենտ-ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը: Նշելով, որ հաշվետու տարում ձեռք բերված հիմնական գիտական արդյունքները ներկայացված են առաջին տեղեկագրով, նա հարկ չհամարեց կրկին անդրադառնալ դրանց, իրազեկելով, որ 2001 թվականին գիտական հետազոտություններ են կատարվել պետական բյուջեից ֆինանսավորվող 466 թեմաներով, հրատարակվել է ավելի քան 90 աշխատություն, 1332 գիտական հոդված լույս է տեսել հանրապետությունում, 850-ը՝ արտասահմանում: Հաշվետու տարում արտասահմանյան երկրներ գործուղման են մեկնել համակարգի 299 գիտնականներ և գործուղումները բավականաչափ արդյունավետ են եղել: Տարվա ընթացքում համակարգում աշխատանքի են ընդունվել 66 երիտասարդ մասնագետներ, ասպիրանտուրայում սովորող երիտասարդների թիվը հասել է 242-ի:

Զեկուցման մեջ ևս առանձնակի տեղ հատկացվեց ֆինանսական դժվարություններին, կադրերի արտահոսքի հետևանքով ստեղծված դրությանը, քննադատվեց ազգային ակադեմիան և ԲՈՒՀ-երը միավորելու մերթ ընդ մերթ առկայծող մտադրությունը:

Տարեկան ժողովի մասնակիցներին ողջունելով, գործնական առաջարկություններով ու սրտացավ հարցադրումներով ելույթներ ունեցան ՀՀ տարածքային կառավարման և արտադրական ենթակառուցվածքները համակարգող նախարար Հովիկ Աբրահամյանը, առևտրի և տնտեսական զարգացման նախարար Կարեն Ճշմարիտյանը, ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանը:

Այնուհետև տեղի ունեցավ մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին ակադեմիկոսներ Դ. Սեդրակյանը, Յու. Ալեքսանյանը, Կ. Ղարագյոզյանը, Ռ. Ղազարյանը, Հր. Սիմոնյանը, պրոֆեսորներ Ա. Գևորգյանը, Ա. Եղիազարյանը:

Տարեկան ժողովի ավարտին տեղի ունեցած ընտրությունների արդյունքում ակադեմիայի փոխպրեզիդենտներ ընտրվեցին ակադեմիկոսներ Էմիլ Գաբրիելյանը և Յուրի Շուքուրյանը, որոնք հետայսու իրենց աշխատանքը չեն համատեղելու բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարների պարտականությունների հետ:

***

Նախօրեին՝ ապրիլի 29-ին, տարեկան ժողովներ էին գումարվել ակադեմիայի ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների, բնական գիտությունների, հումանիտար գիտությունների բաժանմունքներում: Հաշվետու տարվա գործունեության արդյունքների գործարար քննարկումից հետո, հաշվի առնելով, որ ակադեմիայի կանոնադրությամբ փոխպրզիդենտները չեն կարող իրենց աշխատանքը համատեղել բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարի պարտականությունների հետ, նշված երեք բաժանմունքներում էլ տեղի էին ունեցել ակադեմիկոս-քարտուղարի ընտրություններ, որի արդյունքներով այդ պաշտոնները համապատասխանաբար զբաղեցնում են ակադեմիկոս Էդուարդ Ղազարյանը, ակադեմիայի թղթակից-անդամ Արամ Շահինյանը և ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանը:

Էդվարդ ՇԱՀԻՐՅԱՆ